ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

Օր օրի հյուծվում էր մեր աչքերի առջև: Գիտեինք, որ դաժան հիվանդությունը նրան ապրելու քիչ ժամանակ է թողել: Ինքը քաջ գիտակցում էր իր վիճակը, գիտեր, որ վախճանը մոտ է: Բայց անդամ այդ ծանր պահին չտրտնջաց, ընդհակառակը, հանգես բերեց զարմանալի սառնասրտություն և ինքնատիրապետում: Ճակատագրից մի խնդրանք ուներ երկու–երեք ամիս ժամանակ ավարտին հասցնելու սկսած նոր գործը: Եվ հասցրեց ընթերցողի դատին հանձնելով իր պրպտուն մտքի վերջին արդասիքը «Հայաստանի բաժանումը 1920 թվականին» աշխատությունը:

Նա կյանքից հեռացավ թողնելով պատկառելի գիտական ժառանգություն և իր երկրի ու ժողովրդի հանդեպ որդիական մեծ սիրով տոգորված մեծ քաղաքացու բարի անուն:

* * *

Լենգրուշ Արշակի Խուրշուդյանը ծնվել է Զանգեզուրի Շինուհայր գյուղում: Մի սարահարթի վրա էր հին Շինուհայրը՝ կողերին անդնդախոր ձորեր, դիմացը՝ փրփրաբաշ Որոտանը, որը, սեղմված ժայռակոփ ափերին, ահռելի դղրդյունով գալիս դնում էր դեպի հեռուներ:

Հին-հին զրույցների ու լեգենդների աշխարհ էր գյուղը, չորս բոլորը՝ հեռու անցյալի հիշատակներ՝ ավերակ քարակոփ եկեղեցիներ ու մատուռներ, մենաստաններ, ուր եղել են դպրանոցներ ու ձեռագրատներ, ատամնաչատ պարիսպներով հաստաբեստ ամրոցների մնացորդներ, մթին քարանձավներ՝ չգիտես քանի հազարամյակ առաջ պատերին դաջված կենդանակերպ նշաններով:

Աշխատասեր էր ու լայնասիրտ շինուհայրցին, խիզախ ու անկոտրում, անարդարություն չհանդուրժող ըմբոստ, որդեգրած սկզբունքներին անդավաճան: Ապագա նշանավոր գիտնականի վաղ մանկությունն անցել է այդ առինքնող միջավայրում: Թեև ընդամենը վեց տարեկան էր, երբ ըն-

տանիքը տեղափոխվեց Երևան, բայց հետագա ողջ կյանքի ընթացքում նա ամուր կապված էր հայրենի ոստանին ու նրա մարդկանց՝ միշտ զգալով բնաշխարհի բարերար շունչը:

Բարձր առաջադիմությամբ ավարտելով միջնակարգ դպրոցը՝ Լ. Խուրշուդյանը 1946 թ. ընդունվում է Երևանի պետհամալսարանի միջազգային հարաբերությունների նորաբաց ֆակուլտետը: Հետաքրքրասեր և ուշիմ երիտասարդը հենց սկզբից դրսևորեց իր բնավորությանը հատուկ գծերը՝ ինքնուրույն մտածելակերպ, հասարակական երեւույթների յուրովի ընկալում, գաղափարական միօրինակությունները հաղթահարելու ձգտում, գիտական ճշմարտությանը հասու լինելու համառություն:

Հիշում եմ՝ 1948 թ., երևի, աշնանն էր: Հրավիրվել էր համալսարանի միջազգային հարաբերությունների և պատմության ֆակուլտետների համատեղ կոնֆերանս, որի օրակարգում, եթե հիշողությունս չի դավաճանում, հետպատերազմյան շրջանում խորհրդամերիկյան հարաբերությունների վիճակի ու հեռանկարների հարցն էր: Յուրաքանչյուր ֆակուլտետից մեկ զեկուցում էր դրված, որից հետո սկսվեց մտքերի փոխանակումը: Երկու–երեք հոգուց հետո հանդես եկավ Լ. Խուրշուդյանը: Փայլուն էր ելույթը: Ասելով, որ զեկուցողները հարևանցիորեն են ներկայացրել խորհրդամերիկյան հարաբերությունների վատթարացման մեջ Թուրքիայի խաղացած ակտիվ դերը, այնուհետև անդրադարձավ պատերազմի տարիներին Անդրկովկասի նկատմամբ վերջինիս ունեցած ագրեսիվ մտադրություններին ու պատերազմից անմիջապես հետո ԱՄՆ-ի կողմից նրան պաշտպանության տակ վերցնելու դրդապատճառներին: Ավելին, առիթն օգտագործելով՝ նա համարձակություն ունեցավ արծարծելու Թուրքերի կողմից պատմության ընթացքում իրականացրած կոտորածների և 1915 թ. եղեռնի փաստը: Ունկնդիր ուսանողներից շատերն առաջին անգամ էին լսում ապրիլյան եղեռնի, Հայ դատի մասին: Դա ըմբոստ ոգու հազվագյուտ քաղաքական խիզախում էր, որ հետագա տարիներին դրսևորվելու էր լիաբուռն արտահայտություններով:

1951 թ. ավարտելով համալսարանը՝ միջազգային հարաբերությունների գծով կրթություն ստացած երիտասարդը չմտավ դիվանագիտության ասպարեզ: Նրան հետաքրքրողը հարազատ ժողովրդի պատմությունն էր, որի ուսումնասիրմանը, լուսաբանմանը և մասսայականացմանը նվիրեց իր կյանքի շուրջ հիսուն տարին:

1951–1954 թթ. Խուրշուդյանը սովորում է համալսարանի ասպիրանտուրայում, ապա աշխատանքի անցնում ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում, որպես ավագ գիտաշխատող՝ իր գիտական հետաքրքրությունների շրջանակի մեջ ներառելով հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանների պատմության բազմաբնույթ հարցեր:

Հենց սկզբից Լ. Խուրշուդյանը գնաց չտրորված ճանապարհներով՝ ձեռք գարկելով բոլորովին չուսումնասիրված կամ թերի լուսաբանված պրոբլեմների: 1956 թ. երիտասարդ պատմաբանը ավարտում է իր անդրանիկ աշխատությունը՝ նվիրված Բաքվի կոմունայի (1917–1918 թթ.) օրերին Ստեփան Շահումյանի գործունեությանը: Նա առաջիններից մեկն էր, որ արխիվային նորահայտ փաստաթղթերի ու նյութերի օգտագործմամբ

ստեղծեց հայ ժողովրդի դավակի լուսավոր հիշատակին արժանի մի գործ, բացահայտեց անձնվեր հեղափոխականի, նշանավոր կուսակցական ու պետական գործչի մեծությունը, նրա մարդկային ու քաղաքացիական չխամրող կերպարը: Այդ աշխատության համար նա ստացել է պատմական գիտությունների թեկնածուի դիտական աստիճան:

Հայ պատմագրության մեջ նշանակալի երևույթ էր Լ. Խուրշուդյանի «Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում» ծավալուն մենագրությունը, որը լույս տեսավ 1966 թ.: Աշխատությունը ստեղծելիս հեղինակն ուսումնասիրել է սփյուռքահայ իրականության մասին հսկայածավալ գրականություն՝ հետազոտություններ և հուշագրություններ, գաղափարական տարբեր ուղղությունների մամուլի մեծաթիվ օրգաններ, արխիվային հարուստ նյութեր: Ուսումնասիրությունը ներկայացնելով պաշտպանության՝ Խուրշուդյանը 1966 թ. ստանում է պատմական գիտությունների դոկտորի աստիճան, իսկ որոշ ժամանակ անց նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում:

Հաջորդ տարիներն էլ ավելի արդասաբեր եղան: 1974 թ. նա անցնում է դասախոսական աշխատանքի՝ որպես հայկական մանկավարժական ինստիտուտի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, իսկ 1977 թ. մինչև մահվան օրը՝ 22 տարի շարունակ, գլխավորել է Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնի աշխատանքները, իր խոր ու բազմակողմանի գիտելիքները հաղորդել ուսանող երիտասարդությանը, նրանց մեջ սեր առաջացրել մայր ժողովրդի հազարամյակների հերոսական պատմության նկատմամբ, դաստիարակել ճշմարիտ հայրենասիրության ոգով:

70–80-ական թվականներին Լ. Խուրշուդյանը հանդես է գալիս նոր հրապարակումներով: 1977 թ. լույս է տեսնում նրա «Սովետական Ռուսաստանը և հայկական հարցը» մենագրությունը, որը հայ պատմագիտության համար, անկասկած, մնայուն արժեք է: Գրքում նա կատարել է սկզբունքային մի շարք եզրահանգումներ Հայկական հարցի վերաբերյալ, որոնց մի մասն այն ժամանակ նորույթ էր խորհրդահայ պատմագիտության համար:

Լ. Խուրշուդյանը խորությամբ է զբաղվել հայ քաղաքական կուսակցությունների պատմության հարցերով՝ ըստ էության առաջինը ձեռնամուխ լինելով պրոբլեմի բազմակողմանի քննությանը: Հիշատակված «Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում» մենագրությանը հաջորդեցին «Հայ քաղաքական կուսակցությունների պատմության և գաղափարախոսության մի քանի հարցեր», «Դաշնակցության կուսակցության քաղաքականության լուսաբանումը սովետական պատմագրության մեջ» և այլ ուսումնասիրություններ: Ժամանակին մեծ աղմուկի առիթ էր դարձել պատմաբանի «Դաշնակցությունն կուսակցության սոցիալական բնույթի լենինյան գնահատականի հարցի շուրջ» հոդվածը, որտեղ նա վճռականորեն մերժել էր քաղաքական այդ կազմակերպության մասին եղած պաշտոնական տեսակետը, թե գա հայկական խոշոր բուրժուազիայի կուսակցություն է: Հոդվածագիրը ցույց էր տալիս, որ դաշնակցությունը եղել և մնում է աշխատավորական կուսակցություն՝ և՛ իր

սոցիալական կազմով, և՛ նպատակներով: Հոդվածի տպագրությունն այն ժամանակ արգելվեց և լույս տեսավ տարիներ հետո:

Լ. Խուրշուդյանը շատ ժամանակ է նվիրել հայ պատմագրության հարցերի լուսաբանմանը: Այս բնագավառում նրա հետազոտությունները հիմնականում վերաբերում են Հայաստանի առաջին հանրապետության և քաղաքացիական կռիվների պատմության, Խորհրդային Հայաստանի ազգային-պետական շինարարության հարցերին:

Տարիներ շարունակ պատմաբանի ուշադրության կենտրոնում է եղել հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հարցերի քննությունը, որի արդյունքում տվել է պատմագիտությանը հետաքրքրող մի շարք հիմնախնդիրների պատասխանը: Նա հանգամանորեն վերլուծել է թուրքերի մշակած և կենսագործած կրոնաազգայնական տեսությունները՝ օսմանիզմ, պանիսլամիզմ, թուրքիզմ, պանթուրքիզմ, ցույց է տվել, որ թուրք պետականության ազգային քաղաքականությունն ավանդաբար եղել է հակամարդկային՝ հենված բիրտ ուժի վրա, հիմնական նպատակը՝ անփոփոխ պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը, հնարավորությունը ներկայանալու դեպքում զավթել նորանոր երկրներ, թուրքական էթնոսի մեջ ձուլել նվաճված ժողովուրդներին կամ ֆիզիկապես ոչնչացնել այլազգի ու այլակրոն, հատկապես քրիստոնյա, ազգային այն փոքրամասնություններին, որոնք հանդես կբերեին ինքնուրույն գոյատևելու համառություն և դիմադրություն բռնի ձուլման քաղաքականությանը: Արևմտահայությունը հենց այդ պատճառով զոհ գնաց թուրք մարդատյացների յաթաղանին: Չնայած 1915 թ. մեծ արհավիրքին, հայ ժողովուրդը կարողացավ հառնել մոխիրներից, ուշքի դալ, պահպանել դարերով ձևավորված իր կենսափիլիսոփայությունը, հոգեկան կերտվածքի գծերը, լեզվամտածողության կերպը: Միաժամանակ Խուրշուդյանը նկատում էր այն խոր հակասությունը, որ առկա է մարդու հիշողության ծալքերում նստած ամբողջական հայրենիքի և այդ հայրենիքի մի փոքր մասի վրա ազգային ամուր պետականություն ստեղծելու ճիգերի միջև: Այստեղից էլ հավաքական հայության ողբերգությունը, որը դոյատևելու է այնքան, քանի դեռ չլուծված կմնա Հայկական հարցը:

Լ. Խուրշուդյանի ջանքերով հայ ազատագրական պայքարի պատմության հարցերի ուսումնասիրությունը առաջնային խնդիր դարձավ պետական համալսարանի իր ղեկավարած ամբիոնի գործունեության համար: Նա կոլեկտիվը համալրեց հիմնականում երիտասարդ շնորհալի կադրերով, որոնք նրա ղեկավարությամբ ձեռնամուխ եղան ազատագրական շարժման և հայոց նախընթաց դարերի պատմության առանցքային հիմնախնդիրների դիտական բազմակողմանի լուսաբանմանը:

Պրոֆ. Լ. Խուրշուդյանի այս ջանքերին համահունչ էր այն արժեքավոր նախաձեռնությունը, որ նա հանդես բերեց հայ ժողովրդի պատմության ուսումնական քարտեզների (25 քարտեզ) ստեղծման և հրատարակման ուղղությամբ: Դա պահանջում էր կազմակերպական մեծ աշխատանք, հանրապետության քարտեզագետների ուժերի համախմբում, մի բան, որ նա կատարեց բացառիկ նվիրումով ու եռանդով:

Հայ ժողովրդի ազատագրական շարժման հարցերով շատ տարիներ զբաղված արդեն տարիքով առաջացած գիտնականին նոր, հզոր լիցք ու շունչ հաղորդեց 1988 թ. սկսված Ղարաբաղի հայության ազատագրական պայքարը Ադրբեջանի թուրքերի ատելի տիրապետության դեմ: Նա անհուն եռանդով լծվեց ղարաբաղյան խնդրի ճշմարիտ լուսաբանմանն ու մասսայականացմանը հոդվածներով, գրքերով, գիտական զեկուցումներով, կրակոտ ելույթներով: Լ. Խուրշուդյանն առաջիններից մեկն էր, որ գիտական անաչառությամբ պրպտումներ կատարեց Լեռնային Ղարաբաղի ոչ վաղ անցյալի պատմության մեջ: Այդ աշխատանքներն ամփոփվեցին «Լեռնային Ղարաբաղ. պատմական տեղեկանք» (1988, ռուս.) կոլեկտիվ մենագրությունում, «Լեռնային Ղարաբաղի պատմության մի քանի հարցեր» (1988), «Ճշմարտությունը Լեռնային Ղարաբաղի մասին» (1988) գրքերում, դիտական և հանրամատչելի տասնյակ հոդվածներում: Ղարաբաղի նոր և նորադույն պատմությանը քաջատեղյակ դիտնականը, փաստական նյութի լայն օգտագործմամբ այդ աշխատություններում հստակ ու համակողմանի վերլուծություններով բացահայտել է հիմնահարցի պատմության բոլոր էական կողմերը: Արխիվային փաստաթղթերի բազմակողմանի վերլուծությամբ հեղինակն այդ աշխատություններում ցույց է տվել, որ 1920–1921 թթ. Հայաստանը զոհաբերվել է ի շահ համաշխարհային հեղափոխության հաղթանակի անիրականանալի քաղաքականության, որը պարուրել էր ժամանակի խորհրդային ղեկավարության միտքը: Այդ քաղաքականության իրականացման ճանապարհին ամենակոպիտ կերպով ոտնահարվեցին հայ ժողովրդի ազգային իրավունքները հօգուտ Թուրքիայի և Ադրբեջանի, անդամահատելով Հայաստանի առաջին հանրապետության տարածքները:

Լեռնային Ղարաբաղի խնդրի բարձրացման աղերսով Ադրբեջանում բորբոքված հակահայկական հիստերիայի պատճառների ու նպատակների բացահայտմանն էր նվիրված պատմաբանի «Ճշմարտությունը պատմական գիտության միակ չափանիշն է» գրքույկը (1989, ռուս.): Աշխատությունը դրված է պրոֆեսիոնալ բարձր հմտությամբ և խոր դիտականությամբ: Իր ժողովրդի դժվարին օրերին ազնիվ մտավորականը պատմաքննական վերլուծություններով և ընդհանրացումներով մերկացնում էր ադրբեջանական պատմաչինության գսլբոցի արատավոր մեթոդները, պատմական փաստերի սանձարձակ նենգափոխումը, ցույց էր տալիս, որ հայոց պատմության ոլորտներում կեղծարարների մոդոնումները ոչ մի առնչություն չունեն ճշմարիտ դիտության հետ: Աշխատության հեղինակը լայն ընթերցողներին տեղեկացնում էր, թե խորհրդային իշխանության գոյության տասնամյակների ընթացքում, հատկապես 50-ական թվականների կեսերից սկսած՝ Բաքվի չովինիստ իշխանությունների բացահայտ խրախուսանքով և կենտրոնի լուռ համաձայնությամբ, ինչպես էր ադրբեջանական պատմագրությունը կեղծ ինտերնացիոնալիզմի քողով շպարված և մեծ վարպետությամբ կատարում իր սև դործը՝ սեպ խրում երկու ժողովուրդների հարաբերությունների մեջ, նրանց մղում թշնամական գիրքերի: Լ. Խուրշուդյանը ցույց էր տալիս, որ Ղարաբաղը և Նախիջևանը իրենց իշխանության տակ գցելուց անմիջապես հետո ադրբեջանցի թուրքերը փաստորեն իրա-

վունք էին ստացել այդ հայկական պատմական երկրամասում իրականացնել լայնածավալ ազգային հալածանքներ և էթնիկական զտումներ: Գրքի շարադրանքից մեր առջև հառնում է ազգային տարածքների սեփականացման ընթացքի այլանգակ պատկերը: Ոչ միայն այդ տարածքների հայերի, այլև ընդհանրապես հայ ժողովրդի ազգային արժանապատվության ոտնահարումը դարձել էր սովորական բան, ազգային մշակութային ժառանգության յուրացումը՝ կանոն: Հայոց Արցախի ըմբոստացումը համարելով խորհրդային ազգային քաղաքականության սնանկացման վկայություն՝ պատմաբանը շեշտում էր, որ հայ ժողովուրդը իր հայրենիքի այդ անբաժան մասը երբեք չի զիջի աչքը միշտ ուրիշի հողերին և ունեցվածքին հառած տմարգի զավթիչ հարևանին: Արցախը լոկ տարածք չէ, փոքրիկ ու քարքարոտ մի հողակտոր չէ, ինչպես ժամանակին ասում էին բոլշևիկ ղեկավարները՝ հանգստացնելու համար հայ ժողովրդին: Հայության համար այն դարձել է ազգային գաղափար, որն անհնար է հանել որևէ հայի գիտակցությունից:

Ղարաբաղյան շարժման չիկացած օրերին Լ. Խուրշուդյանի հրապարակային ելույթները բուռն ոգևորություն էին առաջացնում զանգվածների մեջ: Նա կրքոտ քննադատության էր ենթարկում Ադրբեջանին հովանավորության տակ առած կայսերապաշտական իր դարն ապրած քաղաքականությունը, կոչ էր անում արժանի հակահարված տալ թուրք ելուզակներին, որոնք, հրապարակ հանելով ամենավայրենի բնազգներ, հեղում էին հազարավոր խաղաղ հայ բնակիչների արյունը Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում և այլուր իրենց պետության տարածքում: Ավելին, հարձակումներ էին գործում Հայաստանի Հանրապետության սահմանների վրա՝ չթաքցնելով հեռուն գնացող զավթողական նպատակները:

Լ. Խուրշուդյանը վճռականապես մերժեց անկախ Հայաստանի իշխանության գլուխ ելած ՀՀշական ղեկավարության ներքին ու արտաքին քաղաքականությունը, տարիներ շարունակ անկոմպրոմիս պայքար մղեց Լ. Տեր-Պետրոսյանի հակաժողովրդական ռեժիմի դեմ:

Միաժամանակ, գիտական-պատմաբանը շարունակում էր ակտիվ ստեղծագործական աշխատանքը: 1995 թ. և 1999 թ. լույս տեսան նրա «Հայկական հարցը» և «Հայ ազգային դաղափարախոսությունը» աշխատությունները:

Լ. Խուրշուդյանը թողել է պատկառելի գիտական ժառանգություն: Նրա ավելի քան 100 գիտական աշխատությունների ցանկում են 15 գրքեր ու կոլեկտիվ մենագրություններ, այդ թվում՝ հայ ժողովրդի համահավաք պատմության ակադեմիական բազմահատորյակի 7-րդ հատորի (1967) համապատասխան բաժինները: Նա ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտի «Հայ ժողովրդի պատմության» ռուսերեն քառահատորյակի հեղինակային կոլեկտիվի անդամ էր, դործուն մասնակցություն է ունեցել «Հայկական սովետական հանրագիտարանի», «Հայկական համառոտ հանրագիտարանի», «Հայկական հարց. հանրագիտարանի» ստեղծման գործին, եղել է գիտական հանդեսների խմբագրական կոլեգիաների անդամ, գլխավորել է Պատմաբանների հայկական ընկերությունը:

Լ. Խուրշուդյանի աշխատություններից մի քանիսը լույս են տեսել արտասահմանում: Իր ուսումնասիրությունների արդյունքներով նա գիտական զեկուցումներով, բացի Երևանից, հանդես է եկել Մոսկվայում, Լենինգրադում, Թիֆլիսում, Տաշքենդում, Ուլյանովսկում, Ռիգայում և այլուր, հայ պատմագրությունը ներկայացրել է միջազգային բազմաթիվ գիտաժողովներում և նստաշրջաններում (Բոստոն, Լոս Անջելես, Թեհրան, Բեյրութ, Բուենոս Այրես և այլն):

Նշանավոր գիտնականի վաստակը բարձր է գնահատվել. 1990 թ. նա ընտրվել է հանրապետության ԳԱ թղթակից անդամ, 1996-ին՝ ակադեմիկոս:

Ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանն ապրեց ու գործեց իմաստալից կյանքով: Հիմա նա մեզ հետ չէ, բայց նրա ստեղծագործությունները բազում տարիներ կծառայեն սերունդների հայրենասիրական դաստիարակության գործին՝ վառ պահելով վաստակաշատ պատմաբանի հիշատակը:

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ